ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 58

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 04-ը հունիսի 2020 թվականի թիվ 7 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 04 հունիսի 2020 թվականի թիվ 7 նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին
3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոցի սաներին ծնողական վճարներից արտոնություններ տրամադրելուն համաձայնություն տալու մասին,
4. Արենի համայնքի Ելփին բնակավայրի նախկին բնակիչ (հանգուցյալ) Արևիկ Նազարյանի հուղարկավորության նպատակով Ելփին բնակավայրի բնակիչ Աղասի Գրիգորյանի կողմից ծախսված 100 000 ՀՀ դրամը փոխհատուցելուն համաձայնություն տալու մասին,
5. 2020 թվականի մարտի 17-ից մայիսի 26-ը ընկած ժամանակահատվածում, նոր տեսակի կորոնավիրուսի տարածման կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում, Արենի համայնքի վարչական տարածքում արտաժամյա հերթապահություն իրականացրած համայնքապետարանի աշխատակազմի և «Արենի» ՀՈԱԿ-ի աշխատակիցների անդամներին սահմանված դրույքաչափի 50%-ի չափով հավելավճար հատկացնելուն համաձայնություն տալու մասին,
6. Արենի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին,
7. Արենի համայնքի ավագանու 19.04.2019թվականի թիվ 47 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենի համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսերը սահմանելու մասին,
8. Արենի համայնքի ավագանու 06-ը դեկտեմբերի 2019թվականի թիվ 123 որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելուն համաձայնություն տալու և «Արենի» ՀՈԱԿ-ի աշխատակից՝ էքսկավատորավարի համար լրացուցիչ վճար սահմանելու մասին,